**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԹԻՎ** 1

01.04.2021**թ. կնքված** N **«ԳՀԱՊՁԲ**-2021/8-3-**ԵՊԲՀ**-5» **գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին**

ք. Երևան «____»________________ 20____թ.

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը, ի դեմս ռեկտոր Ա. Ա. Մուրադյանի, որը գործում է Հիմնադրամի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Լանար Սերվիս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Տ. Դանիելյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, հիմք ընդունելով 01.04.2021թ. կնքված N «ԳՀԱՊՁԲ-2021/8-3-ԵՊԲՀ-5» գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5-րդ, 8.6-րդ կետերը, «Լանար Սերվիս» ՍՊԸ-ի կողմից 23.06.2021թ.-ին ներկայացրած գրությունը և այն հանգամանքը, որ փոփոխությունը չի դասվում ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 56-րդ կետով սահմանված արհեստական փոփոխությունների շարքին, կնքեցին սույն համաձայնագիրը հետևալի մասին:

1. **ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

Կողմերը որոշեցին՝

1.1 01.04.2021թ. կնքված N «ԳՀԱՊՁԲ-2021/8-3-ԵՊԲՀ-5» գնման պայմանագրով սահմանված ապրանքների մատակարարման ժամկետները երկարաձգել և վերջնաժամկետ սահմանել մինչև 2021 թվականի հուլիսի 30-ը:

2. **ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Սույն համաձայնագրում Կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4 Սույն համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. **ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

| «ԳՆՈՐԴ» | «ՎԱՃԱՌՈՂ» |
| --- | --- |
| **«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ** | **«Լանար Սերվիս» ՍՊԸ** |
| **Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2** | **ք. Երևան, Բաբաջանյան 163/13** |
| **Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ** | **«Արմսվիսբանկ» ՓԲԸ** |
| **Հ/Հ** 11500166513800 | **Հ/Հ** 2500010195390100 |
| **ՀՎՀՀ 01503448** | **ՀՎՀՀ** 01843373 |
| | **էլ. հասցեն** info@lanar.am |
| | **Հեռ.** 010-39-93-11 |
| **Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան** | **տնօրեն՝ Տ. Դանիելյան** |
| ______________________ | ______________________ |
| **(ստորագրությունը)** | **(ստորագրությունը)** |
| **Կ.Տ** | **Կ.Տ** |

Digitally signed by DANIELYAN TIGRAN 2707730467
Date: 2021.06.28 11:58:09 AMT

Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078
Date: 2021.06.28 14:14:56 AMST